

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**Ք.Երևան  
Ժ.11.00**

**17 դեկտեմբերի 2010թ.**

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 51 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու արտահերթ նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետը, աշխատակազմի Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետը:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրություն:

Առաջադրվել է Երևանի ավագանու «Հանրապետական» խմբակցության անդամ Կարեն Կարապետյանի թեկնածությունը:

**Ժամը 12<sup>00</sup>-13<sup>00</sup> փակ գաղտնի քվեարկություն.**

Քվեարկության արդյունքները՝

**Կարեն Կարապետյան**

Կողմ՝ 50

Դեմ՝ 1

**Երևանի քաղաքապետ է ընտրվել Կարեն Կարապետյանը:**

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ Երևանի քաղաքապետը իր լիազորությունները կստանան 2010 թվականի դեկտեմբերի 20-ին, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Երևանի բնակիչներին տրված երդմամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**